ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ք. Եղեգնաձոր

«06» հունիսի 2017թ N 49

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ N12 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6–րդ կետի և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001թ. օգոստոսի 16-ի ,,Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին,, N 762 որոշման 9- րդ գլխի 58- րդ կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել մարզային մրցութային հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 1-ի N12 արձանագրությունը
2. Դադարեցնել 2015 թվականի մայիսի 20-ին անհատ ձեռնարկատեր Վրույր Խաչատրյանին հատկացված Վայք – Եղեգնաձոր միկրոավտոբուսային երթուղու սպասարկումը
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ